# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 6-րդ, 8-րդ, 28-րդ, 33-րդ, 36-րդ, 44-րդ, քաղաքացիական դատավարություն բաժնի 8-րդ, 29-րդ հարցերը:

**Քաղաքացիական իրավունք բաժին**

**Հարց 6**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թվականի որոշմամբ անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

**Հարց 8**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 01.01.2022 թվականին ուժի մեջ մտած խմբագրությամբ 377-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից վկայակոչված փաստարկներին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ հարցադրումը բխում է խնդրում նկարագրված փաստական հանգամանքներից:

**Հարց 28**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1167-րդ հոդվածի 1-ին մասով և 1168-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում նաև տվյալ իրավաբանական անձը նշելու նպատակով ֆիրմային անվանման կիրառումը ցուցանակների, ձևաթղթերի, ազդագրերի, ապրանքների, դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև օրենքով չարգելված այլ կիրառումներ:

**Հարց 33**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Ինչ վերաբերում է Հավակնորդի փաստարկներին, ապա Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ ըստ խնդրի փաստական հանգամանքների երեք անգամ ապրանքների մատակարարման ժամկետների խախտում թույլ տալը կարող է գնահատվել պայմանագրի էական խախտում:

**Հարց 36**

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները Հանձնաժողովը համարում է հիմնավոր այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

Նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Նշվածից հետևում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այդ թվում ապրանքների բաղադրամասային թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման այդ թվում արտադրողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից, այնուամենայնիվ նույն օրենգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ եթե վնասի առաջացմանը կամ մեծացմանը նպաստել է տուժողի կոպիտ

անզգուշությունը, ապա հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված 2-րդ տարբերակը, այն է՝ վնասի հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից, ևս կարող է համարվել որպես առաջադրված հարցի ճիշտ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

**Հարց 44**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1791/02/11 քաղաքացիական գործով 30.04.2015 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք ամուսնության ընթացքում ամուսինների միջև կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա մի ամուսնու՝ մյուս ամուսնուց ձեռք բերված գույքի նկատմամբ կարող է գործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված համատեղ սեփականության իրավական ռեժիմն ընդհանրապես, և մասնավորապես, այն դեպքում, երբ այդպիսի պայմանագրի կնքումն ամուսիններից մեկի համար կրել է պարտադիր բնույթ, արձանագրել է, որ հաշվի առնելով առուվաճառքի իրավահարաբերությունների առանձնահատկությունը, այն դեպքում, երբ նման հարաբերություններ ծավալվում են ամուսինների միջև, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության իրավական ռեժիմը գործել չի կարող: Հակառակ պարագայում խաթարվում է քաղաքացիական շրջանառության և մասնավորապես՝ առուվաճառքի բուն էությունը:

**Քաղաքացիական դատավարություն բաժին**

**Հարց 8**

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ձևակերպումը (կարող է հանգեցնել) թույլ է տալիս ենթադրել, որ որոշակի դեպքերում վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը կարող է հանգեցնել կողմերի մրցակցության սկզբունքի խախտմանը:

**Հարց 29**

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից վկայակոչված փաստարկներին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ հարցադրման բովանդակությունից և առաջադրված տարբերակներից ակնհայտորեն հետևում է, որ հարցը վերաբերում է

հեռակա դատաքննություն կիրառելու հիմքերին, իսկ հարցադրման մեջ հեռակա դատաքննության փոխարեն հեռավար դատաքննություն նշված լինելու հանգամանքը հարցի ընկալման վրա որևէ ազդեցություն ունենալ չի կարող:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 3829 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 36-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ** **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

**Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ**